



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ ԲՐԵՍԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, այս Կիրակի, 26 Յունիսը, տօնն է Ս. Էջմիածնի:

Այս տօնին առթիւ, այս Կիրակի Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ Բրեսենթա Հովիտի եկեղեցւոյ մէջ (6252 Honolulu Ave., La Crescenta):

Ս. Պատարագ կը մատուցուի ամէն Կիրակի, կ.ա. ժամը 11-ին, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուի Տէր Ղազարեան» սրահին մէջ:

## PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AT THE CRESCENTA VALLEY PARISH

On Sunday, June 26<sup>th</sup>, 2011, the Feast of Holy Etchmiadzin, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at the Crescenta Valley church (6252 Honolulu Ave., La Crescenta).

The service begins at 11:00 a.m. at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Տ. ՊՕՂՈՍ ՔՐՆՅ. ՊԱԼԹԱՅԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Հինգշաբթի, 23 Յունիսի յետմիջօրէին, Ազգ. Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Տ. Պօղոս Քհնյ. Պալթայեանի եւ երեցկնոջ, որոնք Յունաստանէն հիւրաբար կը գտնուին Լոս Անճելըս: Տէր Հայրը իբրեւ հովիւ կը ծառայէ Յունաստանի հիւսիսային շրջանին մէջ:

Հիր հոգեւորականը Առաջնորդ Սրբազանին տեղեկութիւններ տուաւ Յունաստանի հայկական գաղութին մասին, մանաւանդ որ Առաջնորդ Սրբազանը անցեալին ծառայած է Յունաստանի մէջ: Ան նաեւ ընդհանուր ծանօթութիւններ ունեցաւ Արեւմտեան մեր Թեմի ծխական թէ կրթական աշխատանքներուն մասին:

Կիրակի, 26 Յունիսին, Տ. Պօղոս Զհկ. Պալթայեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ Կլենտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, իսկ Կիրակի, 3 Յուլիսին՝ Զոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ մէջ:

## PRELATE WELCOMES REV. FR. BOGHOS BALTAYAN



On Thursday, June 23<sup>rd</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Rev. Fr. Boghos Baltayan and his wife, who are currently visiting from Greece.

Fr. Boghos reported on the situation of the Armenian community in Greece, which was of particular interest to the Prelate since he has

previously served in Greece at the Thessaloniki parish. The Prelate gave Fr. Boghos an overview of the mission that is carried out by the Prelacy and of the activities of our churches and schools.

Fr. Boghos will conduct Divine Liturgy at St. Mary's Church in Glendale on Sunday, June 26<sup>th</sup>, and at St. Garabed Church in Hollywood on Sunday, July 3<sup>rd</sup>.

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ Զ.Ս.Ը.Ս.Ի «ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՅԱՆԴԵՍ»ԻՆ

Յառաջիկայ շաբաթավերջին տեղի պիտի ունենան Զ.Ս.Ը.Ս.Ի 36րդ Նաւասարդեան մարզախաղերու փակման հանդիսութիւնը, փառատօնն ու տողանցքը, «Պըրմիսկիէմ Զայ Սքուլ»ի համալիրին մէջ, ՎԷՆ Նայս:

Կիրակի, 3 Յուլիսին, «Պըրմիսկիէմ Զայ Սքուլ»ի մարզադաշտին մէջ, կ.ե. ժամը 6-ին, Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ Նաւասարդեան մարզախաղերու լրումը նշող փակման հանդիսութեան ու տողանցքին եւ պիտի փոխանցէ իր պատգամը եւ օրհնութիւնները:

Այս Շաբաթ, 25 Յունիսի երեկոյեան, CBS Studio Center-ի մէջ, տեղի պիտի ունենայ Բ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան Յաղթանակի Պարահանդէսը:

Առաջնորդ Սրբազան Զայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին, պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքը եւ պիտի ընթերցէ Վեհափառ Զայրեպետի օրհնութեան գիրը:

## **PRELATE TO ATTEND VICTORY BALL AND NAVASARTIAN GAMES CLOSING CEREMONY**

On Thursday, June 30<sup>th</sup>, the Homenetmen 36<sup>th</sup> Navasartian games and festival will begin at Birmingham High School. The festival continues until Sunday, July 3<sup>rd</sup>.

The Prelate will attend the closing ceremony which will take place on Sunday evening, and will convey his blessings and message.

The annual Homenetmen Victory Ball will be held on Saturday, June 25<sup>th</sup> at CBS Studios. The Prelate will deliver the invocation and read the letter of blessing of H.H. Catholicos Aram I.

\*\*\*

## **ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**



Չորեքշաբթի, 22 Յունիսին, Լոս Անճելըսի քաղաքապետութիւնը համագումար մը կազմակերպած էր ՎԵՆ ՆԱՅՍ աւանի քաղաքապետութեան կեդրոնին մէջ, նիւթ ունենաելով «Կրօնական բազմազանութիւն. Ամերիկեան ինքնութեան

կազմաւորում, Զալածանքէ դէպի բազմազանութիւն»:

Համագումարը քննարկեց հարցերը այն համայնքներուն, որոնք հալածանքի ենթարկուած են բազմազանութեան անցնող ընկերութիւններու մէջ, նաեւ անոնց դիմագրաւած մարտահրաւերները: Այդ համայնանքներուն շարքին են հայեր, իրանցիներ, հրեաներ եւ ղըպտիներ:

Չեկուցում ներկայացնողներու շարքին էին, իբրեւ Ազգ. Առաջնորդարանի եւ Զայ Դատի Արեւմտեան շրջանի յանձնախումբի ներկայացուցիչ՝ բարեշնորհ Մարք Սրկ. Շիրին: Զայ Դատեն ներկայ էր նաեւ յանձնախումբի անդամներէն Տիկին Նորա Յովսէփեան:

## PRELACY PARTICIPATES IN L.A. CITY HUMAN RELATIONS COMMISSION FORUM



On Wednesday, June 22<sup>nd</sup>, 2011, a public forum organized by the City of Los Angeles Human Relations Commission was held at the Van Nuys City Hall Chambers with the theme, "Religious Pluralism: Shaping the American Identity - From Persecution to Pluralism".

The forum focused on communities who have experienced persecution transitioning into a pluralistic society and the challenges they face, among them the Armenian, Iranian Jewish and Coptic communities.

Among the panelists was Archdeacon Mark Shirin, representing the Western Prelacy and the ANC-WR. ANC-WR board member Mrs. Nora Hovsepian was among the guests in attendance.

\*\*\*